ՀՀ ԿԳՄՄՆ «Մարտունու Տ. Աբրահամյանի անվան ավագ դպրոց» ՊՈԱԿ

ԱՎԱՐՏԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

Թեմա՝ *Սովորողների մեջ ինքնուրույնություն, նախաձեռնություն և ստեղծագործական ունակությունների զարգացումը դասավանդման ընթացքում*

Դպրոց՝ Գոմքի միջնակարգ դպրոց

Ուսուցիչ՝ Գայանե Նավասարդյան

Ղեկավար՝ Օհանեսյան Կիմա

ՎԱՅՔ 2023

Բովանդակություն

Ներածություն……3

Սովորողների ինքնուրույնություն, նախաձեռնություն և ստեղծագործական ունակություններ……..…5

Սովորողների ինքնուրույնություն, նախաձեռնություն և ստեղծագործական ունակությունների դրսևորումը առարկայի դասավանդման ընթացքում……10

Եզրակացություն……...17

Օգտագործված գրականություն……....18

Ներածություն

Հայաստանում իրականացվող կրթական վերափոխումները նոր պահանջներ են դնում ուսուցիչների առջև: Հանրակրթության առջև խնդիր է դրված ձևավորել ամբողջ կյանքի համար կիրառելի գիտելիքներով, հմտություններով, կարողություններով և արժեքներով օժտված անհատներ:

Հասարակական-քաղաքական և սոցիալ-տնտեսական հարաբերությունների ժողովրդավարացման ու գլոբալացման, գիտության և արտադրության միջազգայնացման, ազգային ու միջազգային մակարդակներում միջէթնիկական ու միջմշակութային ինտեգրման ժամանակակից գործընթացներն առանձնահատուկ պայմաններ են ստեղծում կրթական համակարգերի արդիականացման համար:

Ժամանակակից ուսուցումը աշակերտակենտրոն է և ժամանակակից կրթական համակարգի կարևոր խնդիրներից և արժեքային կողմնորոշիչներից մեկն է աշակերտների մեջ ինքնուրույնության, նախաձեռնողականության և ստեղծագործական ունակությունների ձևավորումն ու զարգացումը: Այս որակները օգնում են անձին հետագայում ինքնադրսևորվել կյանքի բոլոր բնագավառներում: Սովորողները այս որակների շնորհիվ զարգացնում են իրենց ճանաչողական կարողություններն ու հմտությունները: Հետևաբար դասավանդման ժամանակ անհրաժեշտ է կիրառել մանկավարժական այնպիսի հնարներ և մեթոդներ, որոնք աշակերտների մեջ կսերմանեն նախաձեռնողական, ինքնուրույնության և ստեղծագործականության ունակություններ:

Կրտսեր դպրոցական տարիքի երեխաների մեջ ինքնուրույնության և նախաձեռնողականության զարգացումը էապես կախված է մեծերից, հարազատներից և ուսուցիչներից, ովքեր շրջապատում են երեխային:

Աշխատանքի արդիականությունը: Գիտատեխնիկական առաջընթացի հետ կապված ներկայիս կրթական համակարգը պահանջում է կարողունակություններով օժտված անհատ ձևավորել: Աշխատանքի արդիականությունը պայմանավորված է նրանով, որ կրտսեր դպրոցական տարիքը կարևոր փուլ է մարդու զարգացման համար և անհրաժեշտ է հենց այդ տարիքում աշակերտի մեջ ձևավորել և զարգացնել

ինքնուրույնություն, նախաձեռնողականություն և ստեղծագործական կարողություններ:

Աշխատանքի նպատակը: Սույն աշխատանքի նպատակն է ուսուցիչների մեջ զարգացնել մանկավարժական մտածողությունը, մատնանշել մեթոդների կարևորությունը և ցույց տալ, թե ինչպես է պետք տարբեր մեթոդների և հնարների միջոցով զարգացնել սովորողի ինքնուրույնությունը, նախաձեռնությունը և ստեղծագործական ունակությունները:

Աշխատանքի խնդիրները: Տվյալ հետազոտական աշխատանքի շրջանակներում ես իմ առջև խնդիր եմ դրել ուսումնասիրել աշակերտների ինքնուրույնության, ստեղծագործականության խթանման գործընթացի առանձնահատկությունները: Վերոնշյալ նպատակի իրականացման համար մեր առաջադիր խնդիրներն են.

1. տեսական գրականության ուսումնասիրում,

2. նյութերի հավաքում, մշակում և դասակարգում,

3. խմբային աշխատանք,

4. ինքնուրույնության և ստեղծագործականության խթանման ժամանակակից միջոցների և եղանակների առաջարկում:

Աշխատանքի կառուցվածքը: Աշխատանքը կազմված է բովանդակությունից, ներածությունից, երկու գլուխներից:

Սովորողների ինքնուրույնություն, նախաձեռնություն և ստեղծագործական ունակություններ

«Երեխան ունի իր առանձահատուկ տեսնելու , մտածելու և զգալու ունակությունները:

Չկա ավելի հիմար բան , քան փորձել փոխարինել դրանք մեր ունակություններով»:

Ժ.Ժ. Ռուսո

Հանրակրթական տարրական ծրագիրը պետք է միտված լինի ստորև ներկայացված ակնկալվող վերջնարդյունքների ապահովմանը: Սովորողների ինքնուրույնությունը, նախաձեռնողականությունը և ստեղծագործական կարողություններն արտահայտելու համար ՀՊՉ-ն սահմանում է հետևյալ վերջնարդյունքները.

S7. մտքերն արտահայտելիս բերի պարզ հիմնավորումներ, կատարի ընդհանրացումներ և պարզ դասակարգումներ.

S8. դրսևորի տրամաբանական և ստեղծագործական մտածողություն, կարողանա անդրադառնալ ու արձագանքել սեփական և ուրիշների ստեղծած աշխատանքին.

S9. հասկանա իր առջև դրված խնդիրը, մշակի և կատարի քայլեր այն լուծելու համար.

S10. նկարագրի շրջակա աշխարհի օբյեկտները, երևույթները և դրանց փոխադարձ կապերը.

S12.համատեղ կամ ինքնուրույն իրականացնի պարզ հետազոտական աշխատանքներ, անի եզրակացություններ՝ հիմնվելով ստացված տվյալների և դիտարկումների վրա, փաստերն օգտագործի իր գաղափարները հիմնավորելու համար ներկայացնի ստացված արդյունքը պարզ գիտական բառապաշարով: [1]

Հաշվի առնելով Հանրակրթական պետական չափորոշիչների ներկայացրած վերջնարդյունքները՝ կարելի է եզրակացնել, որ կրթական գործընթացում կարևոր

[1] https://www.arlis.am/documentview.aspx?docid=149788

կարողություններ են ստեղծագործական աշխատանքը, նախաձեռնողականությունը և ինքնուրույնությունը: Վերջիններս դասի ընթացքում կիրառվող կարևոր հմտություններ են, որոնք պետք է բացահայտվեն և զարգանան: Այս ամենը իրականացնելու համար մեծ ու եռանդուն աշխատանք պետք է իրականացվի ուսուցչի կողմից: Հատկապես տարրական դասարաններում, երբ դրվում է սովորողի կրթության հիմնաքարը, պահանջվում է լուրջ և անհատական մոտեցում:

Ինքնուրույնություն: Աշխարհը գնում է դեպի զարգացում: Զարգանում է նաև կրթական համակարգը: Անհրաժեշտ է աշակերտներին տալ հիմնարար գիտելիքներ և սովորեցնել ինքնուրույնություն: Այս համընդհանուր զարգացման աշխարհում առանձնահատուկ կարողություն է մարդու ինքնուրույնությունը, այն անձնային որակ է: Ինքնուրույնությունը, սեփական կյանքը կազմակերպելու, սեփական հոգևոր ու մտավոր հնարավորությունները գիտակցելու, գնահատելու և ըստ այդմ իր զարգացման ուղին ընտրելու մարդու ընդունակությունն է: Ինքնուրույնությունը ձևավորվում է աստիճանաբար՝ երեխայի յուրաքանչյուր տարիքային փուլում, ընդ որում յուրաքանչյուր տարիքում այն ունի տարբեր հատկություններ և դրսևորման ձևեր: Որպեսզի երեխան կարողանա դրսևորել ինքնուրույնություն, պետք է նրան տալ ազատություն: Ուսուցչի համար կարևոր խնդիր է դառնում ուսուցման գործընթացն աստիճանաբար ինքնուսուցման գործընթացի վերածելը: Ինքնուսուցման պարագայում սովորողն ինքն է կազմակերպում, կարգավորում և հսկում իր իմացական գործունեությունը:

Պրոֆեսոր Ա. Վ. Պետրովսկին նշում է կրտսեր դպրոցականի անձնավորության և իմացական պրոցեսների զարգացումների վերաբերյալ մի քանի դրույթներ: Ընկալման զարգացման վերաբերյալ գրում է. «Ընկալվող առարկաները վերլուծելու և տարբերակելու հնարավորությունները կապված են երեխայի գործունեության այնպիսի տեսակի ձևավորման հետ, որն ավելի բարդ է, քան զգայությունը և իրերի անմիջականորեն մատչելի առանձին հատկությունների

տարբերակումը: Գործունեության այդ տեսակը, որը կոչվում է դիտում, հատկապես ինտենսիվորեն է ձևավորվում հենց դպրոցական ուսուցման ընթացքում»:[2]

Սա երեխայի մտածողության զարգացման սկզբնական փուլն է, որը տեղի է ունենում պատկերների, առարկաների միջոցով: Օրինակ տառերի ուսուցման ժամանակ յուրաքանչյուր տառ ներկայացվում է այնպիսի առարկաների տեսքով, որոնք սկսվում են այդ տառով: Ճիշտ զարգացման համար հարկավոր է ավելի պատկերավոր և առարկայական ներկայացնել նյութը:

Ուսուցումը բավական շատ մտավոր, ֆիզիկական և աշխատանքային լարվածություն ու ջանքեր է պահանջում: Այդ ընթացքում, սակայն, կատարելագործվում են տարրական դասարանի աշակերտի հիշողությունը, երևակայությունը, ուշադրությունը և մտածողությունը: Պետրովսկին անդրադառնում է ուշադրության, հիշողության, երևակայության և մտածողության զարգացումներին. «Առաջին դասարանցիների կամածին ուշադրությունը անկայուն է, քանի որ նրանք դեռևս չունեն ինքնակարգավորման ներքին միջոցներ: Այդ պատճառով փորձված ուսուցիչը դասի ընթացքում հերթափոխում է ուսումնական աշխատանքի տարբեր տեսակները (տարբեր եղանակներով կատարվող բանավոր հաշվում, խնդիրների լուծում և արդյունքների ստուգում, գրավոր հաշվումների նոր եղանակի բացատրություն, դրանց ամրապնդման նպատակը հետապնդող վարժություններ և

[2] Պոդֆ Ա Վ Պետրովսկու խմբագրությամբ, Տարիքային և մանկավարժական հոգեբանություն, «Լույս» հրատ, Երևան, 1977, էջ 109

այլն)»։[3] Այնուհետև հաջորդաբար անդրադառնում է վերը նշված զարգացումներին և դրանց առանձնահատկություններին։

Կրտսեր դպրոցական տարիքում աշակերտը սովորաբար ունի դրական տրամադրվածություն շրջապատող իրականության հանդեպ, սիրում է խաղալ և երևակայել։ Այս տարիքում երեխան արդեն ունենում է իր սեփական կարծիքը, սակայն ուսուցչի հեղինակությունը կարող է մեծ ազդեցություն ունենալ այդ կարծիքի ձևավորման և զարգացման վրա։

Նախաձեռնողականություն։ Նախաձեռնողականությունը նորը ստեղծելուն հանգեցնող մտքերի ակունքն է։ Շատ կարևոր է տարաբնույթ մտքեր ունենալն ու այդ մտքերը զարգացնելն ու կյանքի կոչելը՝ ձեռնարկելով հստակ քայլեր։ Սա բավականին բարդ գործընթաց է, որում մենք անկասկած բախվում ենք հազարավոր խոչընդոտների։

Գրեթե անհնար է ինչ-որ բան ամբողջովին մենակ նախաձեռնել։ Այս խորամանկ սկզբունքը դրդում է անհատներին իրենց հարցերի պատասխանները գտնել այլ անձանց շնորհիվ։ Նախաձեռնողականության միջոցով մարդիկ համախմբվում և վերածվում են մեկ թիմի։

Նախաձեռնողականությունն է այն շարժիչ ուժը, որն առաջ է մղում ամեն մի նոր միտք դեպի իրականություն։ Այն հանգեցնում է դրական տեղաշարժի՝ երկրագնդի անդադար շարժին զուգահեռ։ Նախաձեռնողականության առկայությունը զգում ենք մեր գրեթե ամեն քայլում։

Նախադպրոցական տարիքում երեխան սկսում է պարտականության զգացում ունենալ։ 5-6 տարեկան հասակում երեխան ակտիվորեն ինքնահաստատվում է։ Նրա մոտ ձևավորվում է նախաձեռնողականություն, նպատակասլացություն և մեղքի զգացում։ Ձևավորվում է աշխարհայացքը, դրդապատճառները։ Ձևավորվում է ինքնագնահատականը, իր տեղը մեծահասակների հարաբերությունների համակարգում։

[3] Պոդ Ա Վ Պետրովսկու խմբագրությամբ, Տարիքային և մանկավարժական հոգեբանություն, «Լույս» հրատ, Երևան, 1977, էջ 109

Ստեղծագործական ընդունակություններ: Ստեղծագործական ընդունակությունները հարկավոր է զարգացնել երեխաների մոտ սկսած ամենավաղ տարիքից: Շատ կարևոր է տարրական դասարանների աշակերտների ստեղծագործական կարողությունների զարգացմանը միտված ուսուցչի աշխատանքը: Սովորողների ստեղծագործական ունակությունները կարևոր հանգամանք են հանդիսանում ժամանակակից աշխարհում նորանոր հաջողություններ ունենալու, առկա խնդիրներին հեշտ լուծումներ տալու, նոր գաղափարներ իրականացնելու տեսանկյունից: Անհրաժեշտ է սովորողների մեջ դաստիարակել այնպիսի որակներ, որոնք անմիջապես առնչվում են ստեղծագործական գործունեությանը: Դրանք են՝ դիտողունակություն, շփվողականություն, հնարամտություն, կամք, իրողությունները իմաստավորելու և վերլուծելու կարողություն: Այդ կարողությունները կարելի է զարգանել և ձևավորել լեզվական ստեղծագործական խաղերի, տարբեր մրցույթների կազմակերպմամբ և այլ միջոցներով:

Սովորողների ինքնուրույնություն, նախաձեռնություն և ստեղծագործական ունակությունների դրսևորումը առարկայի դասավանդման ընթացքում

Ժամանակակից ուսուցիչը պետք է աշակերտների մեջ սերմանի ինքնուրույնություն, նոր գիտելիքներ ստանալու և դրանք մշակելու ունակություն, ստեղծագործական մոտեցում ցուցաբերելու հատկություն, տարբեր աղբյուրներից ստացված գիտելիքները մշակելու, վերլուծելու և դրանք առանձնահատուկ կերպով կիրառելու ձգտում: ժամանակակից մեթոդները ստեղծված են դասը հենց այդ որակներով ապահովվելուն: Ժամանակակից մեթոդներով հագեցած դասը կարող է հետաքրքրել սովորողներին, բարձրացնել նրանց աշխատունակությունը, դարձնել ինքնուրույն ու նախաձեռնող: Սովորողների ինքնուրույնության, նախաձեռնողականության, ստեղծագործական ունակությունների խթանումը հնարավորություն է տալիս սովորողին ավելի ոգևորված ու մոտիվացված լինել, ինչի արդյունքում բուն դասապրոցեսը դադարում է սովորողի համար լինել ձանձրալի: Միջավայրը, որտեղ սովորողը կարող է դասին մոտենալ ստեղծագործաբար, կկարողանա նախաձեռնել, ինքնուրույնություն դրսևորել, խոսել իր նախասիրությունների, ձգտումների, երազանքների մասին, կարող է դրական ազդեցություն ունենալ սովորողի առաջադիմության վրա: Դասավանդման նորագույն մոտեցումների, ակտիվ և ինտերակտիվ մեթոդների կիրառումը դասավանդման ընթացքում ուսուցչին թույլ են տալիս ոգևորել սովորողներին, գնահատել նրանց կրթական կարիքները: Եթե դասը հետաքրքիր է, ակտիվ, ապա սովորողը հաճույքով է մասնակցում դասին:

Դասն ակտիվ ու շարժուն անցկացնելու, սովորողների ճանաչողական ու ստեղծագործական ունակությունները զարգացնելու նպատակով ուսուցիչը կարող է կիրառել մի շարք մեթոդամանկավարժական հնարներ.

- ԳՈՒՍ
- Տ-աձև աղյուսակ
- Մ-աձև աղյուսակ

• Ձնագնդի

• Խճանկար

• Երեք բանալի և մեկ կողպեք

• Մտագրոհ

Թվարկված մեթոդների իրականացումը սովորողից պահանջում է ստեղծագործական ունակություններ: Կիրառելով այս ժամանակակից մեթոդները՝ ուսուցիչը հնարավորություն է տալիս սովորողին արտահայտել սեփական մտքերը, խմբում ցուցաբերել նախաձեռնողականություն, կարողանալ ինքնուրույն աշխատել և համագործակցել խմբի մյուս անդամների հետ:

Սովորողների ստեղծագործական մտածողության ձևավորումն ու զարգացումը մասնավորապես մայրենիի դասերին ևս դիտարկվում է որպես կրթության կարևոր խնդիր: Սովորողների ինքնուրուրույն աշխատելը, նախաձեռնող լինելը, ստեղծագործական մտածողությունը կարևոր հանգամանք է ժամանակակից աշխարհում նորանոր հաջողություններ ունենալու, առկա խնդիրներին հեշտ լուծումներ տալու, նոր գաղափարներ իրականացնելու համար: Սովորողի ստեղծագործական ունակությունների զարգացման ընթացքում կարևոր հանգամանք է ստեղծագործական մտածողության զարգացումը: Այն լավագույն միջոց է դուրս գալու սահմանափակ մտածելակերպից, ընդլայնելու երևակայությունը, զարգացնելու խոսքային կարողությունը: Մայրենիի դասին աշակերտակենտրոն ուսուցման ազդեցությունը համակողմանի է և ունի լայն շրջանակ՝

• Նպաստում է սովորողի ինքնուրույնությանը, նախաձեռնողականությանն ու ստեղծագործական ունակությունների զարգացմանը:

• Հարստացնում է սովորողի բառային պաշարը:

• Օգնում է սովորողի կապակցված խոսքի բնականոն զարգացմանը:

• Ձևավորում է գեղագիտական ճաշակ:

• Դաստիարակում է կամային բարձր, ազնիվ հատկանիշներ:

• Նպաստում է սովորողի ինքնուրույն կարծիքի, դիրքորոշման անկաշկանդ արտահայտմանը:

• Զարգացնում է պատկերավոր մտածողությունն ու ստեղծագործական միտքը:

• Զարգացնում է դասդասելու, այս կամ այն իրողությունը հատկանշավորելու, տարբերություններ ու նմանություններ գտնելու կարողություն:

Այս պարագայում սովորողը դադարում է լինել լսողի դերում, ուսուցչի հետ հավասարապես մասնակցում է դասի ընթացքին:

Ուսումնական գործընթացում կարևորվում է ստեղծագործական մտածողության ձևավորումը պատմելու տեսակների կիրառման ճանապարհով, որը թույլ է տալիս ինքնուրույն մտածել, կարողանալ հայտնել սեփական կարծիքը և հիմնավորել այն: Մայրենիի դասաժամին սովորողների ստեղծագործական ունակությունների զարգացման հիմնական եղանակներից է նյութի վերարտադրումը:

Պրոֆեսոր Ջուլիետա Գյուլամիրյանը իր գրքում առանձնացնում է պատմելու հետևյալ տեսակները.

• մանրամասն կամ բնագրին հարազատ պատմել,

• համառոտ պատմել,

• ընտրովի պատմել,

• դատողություններով կամ մեկնաբանություններով պատմել,

• ձևափոխված պատմել,

• ստեղծագործաբար պատմել, շարունակելով պատմել,

• պատմել որպես մասնակից և պատմել որպես ականատես: [4]

[4] . Ջ Գ ուլ ամիրյ ան, Մայ րենիի ուս ուցման մեթոդիկա, Երևան, 2018, էջ 163:

Ասվածը պատկերացնելու համար ներկայացնենք դասի մեկ նմուշ-օրինակ: Վերցրել ենք մայրենի առարկայի 3-րդ դասարանի «Ժողովուրդն իմաստուն է» թեման: Անցկացնելու ենք ամփոփման դաս:

Դասն անցկացնելիս նպատակ ունենք հասնելու ցանկալի *վերջնարդյունքներին:* Դասի վերջում սովորողը պետք կարողանա.

- մտքերն արտահայտելիս բերել պարզ հիմնավորումներ,
- դրսևորի տրամաբանական և ստեղծագործական մտածողություն,
- կարողանա անդրադառնալ ու արձագանքել սեփական և ուրիշների ստեղծած աշխատանքին:

Դասը կանցկացնենք *ԽԻԿ համակարգի* միջոցով: Նախօրոք դասարանը բաժանել ենք խմբերի՝ որոնողական գործունեություն ծավալելու համար:

Ձևավորված ստեղծագործական խմբերն են՝



Տրվում է բացատրություն, թե յուրաքանչյուր խումբ ինչ տեղեկություններ պետք է հավաքի, որտեղ պետք է փնտրի անհրաժեշտ տեղեկույթը և ինչպես այն ձևավորի:[5] Այսպես՝

Տեսաբանների խումբ: Ընթերցել առակներ, տեղեկատվական աղբյուրներից որոնել նյութեր՝ առակի մասին, ժանրային առանձնահատկությունների և դրանց կառուցվածքի մասին:

[5] Ինչ պես պլանավորել մայրենիի դասը: 3-րդ դասարան \Կ Թիրոսյան, Կ Չիբուխչյան, Ա Բալասյան,- Եր.: «Զանգակ» հրատ, 2017., էջ՝ 197:

Փորձագետների խումբ: Ընթերցել առակներ, որոնել, թե ինչպես են ավարտվում առակները, ինչ են սովորեցնում առակները, ներկայացնել «առակ» բառի ծագումը:

Նկարագարդողների խումբ: Ընթերցել առակներ, որոշել, թե ինչ գույն ունեն բարին և չարը, թույլն ու ուժեղը, որ գույներն են գերիշխում առակներում, ստեղծել պատկերասրահ:

Խթանման փուլում սովորողները ներկայացնում են իրենց խմբային աշխատանքի արդյունքները: Ուսուցիչը կատարում է համապատասխան հարցադրումներ:

Իմաստի ընկալման փուլում զրույցի միջոցով անդրադառնալ թեմատիկ խմբի առակներին, ամփոփել, ի մի բերել սովորողների մտքերը առակի մասին: Յուրաքանչյուր առակից դուրս գրել 1-2 միտք կամ յուրաքանչյուր առակի բարոյախրտական իմաստ արտահայտող միտքը: Օրինակ՝

Բարոյախրտական միտքը	**Բանալի բառեր առակից**
«Քանի դեռ խոսքը բերանումդ է, դո՛ւ ես նրա տերը, երբ բերանիցդ դուրս է գալիս, նա՛ է քո տերը»:	Քսանթոս, մատաանի, հնարամիտ, պայման
«Գոռոզ աքլորի տունը աղվեսի փորն է»:	Պարծենկոտ, աքլոր, համեստություն
«Իմ լեզվով խոսող օտարն ավելի լավ է, քան իմ լեզուն չիմացող ազգակիցը»:	Սագ, ճայ, լվացվել, փետուր, սևադեմ

Զրույցի ժամանակ տալ հետևյալ հարցերը.

- Ո՞ր առակներից են այս նախադասությունները:
- Ո՞ր առակների միտքն է ամփոփված մեկ նախադասությամբ:
- Ո՞ր առակում կցանկանայիք հայտնվել: Ինչու՞:
- Եթե դուք լինեիք այդ առակի հերոսը, ի՞նչը կփոխեիք այդ առակում:
- Ի՞նչ նոր հերոս կավելացնեիք առակի մեջ:

Կշռադատման փուլ: Թեմայի ամփոփման ուղղությամբ տարվող աշխատանքները կեզրափակենք ստեղծագործական աշխատանքներով: Նույն խմբերին հանձնարարել հետևյալ առաջադրանքները:

- Տեսաբանների խումբ: Առակին վերաբերող նկարները դասավորել հերթականությամբ և տրված առակի համար հորինել նոր ավարտ:

- Փորձագետների խումբ: Առակում ընդգծված բայերը փոխարինել հականիշներով: Ինչպիսի՞ առակ կստանաք՝ զվարճալի, տարօրինակ, հետաքրքրաշարժ:

- Նկարազարդողների խումբ: Բնագրի առակներից որևէ մեկը ներկայացնել դերային խաղի միջոցով:

Դասի ավարտին ուսուցիչը գնահատում է խմբերի աշխատանքը և հանձնարարում է տնային աշխատանք՝ գրել շարադրություն «Ժողովուրդն իմաստուն է» վերագրով:

Այս աշխատանքը շատ կարևոր է աշակերտի ստեղծագործական կարողությունների զարգացման համար:

Այսպիսով մայրենիի դասն ավելի արդյունավետ դարձնելու համար կարևոր է կիրառել ինտերակտիվ մեթոդներ, որոնք ավելի տպավորիչ և հետաքրքիր կդարձնեն դասը: Ակնակալում ենք, որ ներկայացված դասի օրինակը կարող է նպաստել աշակերտի մեջ ինքնուրույնության, նախաձեռնության և ստեղծագործական կարողությունների ձևավորմանը:

Եզրակացություն

Հետազոտական աշխատանքի ընթացքում եկանք հետևյալ եզրահանգումների.

- Սովորողների ինքնուրույնությունը, նախաձեռնողականությունը և ստեղծագործական կարողություններն արտահայտելու համար ՀՊՉ-ն սահմանում է վերջնարդյունքներ, որոնք կարևոր է իրականացնել դասապրոցեսի ընթացքում:
- Ուսուցումը հանրակրթական դպրոցում կարող է լինել արդյունավետ, եթե ուսուցումը զուգորդվում է ակտիվ մեթոդական հնարներով: Հաշվի առնելով ժամանակակից աշակերտների պահանջմունքները, կարծում ենք, որ հենց իրենք պետք է բացահայտեն այս կամ այն հմտությունը, կարողությունն ու գիտելիքը, անհատական կամ խմբային եղանակով պետք է հետազոտեն, պրպտեն, տեղեկություններ հավաքեն դասի թեմայի շուրջ, ներկայացնեն ու ինքնադրսևորվեն:
- Դասի ընթացքում ուսուցիչը պետք է հաշվի առնի բոլոր սովորողների պահանջմունքներն առանձին-առանձին: Թվարկած հմտություններն ու կարողությունները սովորողը ձեռք կբերի այն պարագայում, երբ ուսուցիչը ճիշտ ու կառուցողական է վարում դասը՝ հաշվի են առնված սովորողների անհատական պահանջմունքները, դասը հագեցած է դիդակտիկ նյութերով ու զննական պարագաներով, դասին կիրառվում են մի շարք ակտիվ մեթոդներ:

Օգտագործված գրականություն

1. Պրոֆ. Ա. Վ. Պետրովսկու խմբագրությամբ, Տարիքային և մանկավարժական հոգեբանություն, «Լույս» հրատ., Երևան, 1977, էջ 109
2. Ջ. Գյուլամիրյան, Մայրենիի ուսուցման մեթոդիկա, Երևան, 2018, էջ 163:
3. Ինչպես պլանավորել մայրենիի դասը: 3-րդ դասարան\Կ.Թորոսյան, Կ. Չիբուխչյան, Ա.Բալայան,- Եր.: «Զանգակ» հրատ., 2017., 512 էջ:
4. http://tert.nla.am/archive/NLA%20AMSAGIR/Naxashavix/2013(4).pdf
5. «Նախաշավիղ» հանդես, Երևան, 2013:
6. https://www.arlis.am/documentview.aspx?docid=149788